

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021-2023

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2021

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ Ընկերություններ) կառավարման մարմինը, որն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

2018-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեից Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին հատկացվել է համապատասխանաբար 6,364.8 մլն դրամ և 7,397.2 մլն դրամ, իսկ 2020 թվականին նախատեսվել է հատկացնել 7,520.1 մլն դրամ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2018-2019 թվականներին Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը շարունակել է իրականացնել հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հեռուստահաղորդումներ Առաջին (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

2018-2020 թվականներին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված (2020 թվականին ծրագրված) հաղորդումների թեմատիկ ուղղությունները և ծավալները ներկայացված են

Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 2018-2020 թվականներին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված/հեռարձակման ենթակա հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	Առաջին ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)			Միջազգային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)		
		2018	2019	2020 ծրագրված	2018	2019	2020 ծրագրված
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	624	851.7	900	846	1 149.3	1 150
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1 676	1 962.8	1 950	2 272	2 073.9	2 000
3	Մշակութային	2 182	1 671.8	1 680	1 421	1 340.7	1 400
4	Կրթական, մանկապատանեկան	695	614.9	650	666	410.1	450
5	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	679	749.3	750	1 134	964.8	950
6	Մարզական	405	185.1	400	65	79.1	70
7	Երաժշտական	769	704.6	750	800	720.6	750
8	Զվարճալի-ժամանցային	1 383	1 697.4	1 504	1 334	1 847.1	1 814
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	335	310.5	200	210	162.5	200
Ընդամենը		8 748	8 748.1	8 784	8 748	8 748.1	8 784

Լրատվական և քաղաքական հաղորդումների պահանջի աճով պայմանավորված՝ 2019 թվականին 2018 թվականի համեմատ լրատվական և լրատվական-վերլուծական հաղորդումների քանակը թե՛ Առաջին և թե՛ Միջազգային ալիքների եթերով աճել է 36 տոկոսով: Քաղաքական,

տնտեսական և հասարակական հաղորդումները 2018-2019 թվականներին կազմել են Առաջին ալիքի եթերի համապատասխանաբար 19.2 և 22.4 տոկոսը, իսկ Միջազգային ալիքի եթերի՝ 26.0 և 23.7 տոկոսը: Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակութային հաղորդումները, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումներ: Մշակութային հաղորդումները 2018-2019 թվականներին կազմել են Առաջին ալիքի եթերի համապատասխանաբար 24.9 և 19.1 տոկոսը, իսկ Միջազգային ալիքի եթերի՝ 16.2 և 15.3 տոկոսը:

2019 թվականին ստեղծվել է Հանրային հեռուստաընկերության առցանց լրատվական կայքը, որն ինտերնետային տիրույթում ունեցել է բարձր դիտելիություն: Համաձայն Alexa վերլուծական ծրագրի 2020 թվականի մարտի դրությամբ Հանրային հեռուստաընկերության 1lurer.am կայքը զբաղեցնում է 75-րդ տեղը իր հաճախելիությամբ և ամեն ամիս շարունակում է բարելավել այդ ցուցանիշը: 2021 թվականին նախատեսվում է ավարտին հասցնել լրատվական ինտերնետային կայքի լիարժեք շահագործումը՝ որպես առցանց հեռուստատեսային ալիք:

2018-2019 թվականներին Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և Միջազգային ալիքի հաղորդումները շարունակվել են հեռարձակվել օրական 24 ժամ: Առաջին ալիքի հեռարձակումը իրականացվում է ՀՀ ողջ տարածքում և Արցախում: 2016 թվականի նոյեմբեր ամսից սկսած՝ Երևան քաղաքում իրականացվում է թվային հեռարձակում HD ձևաչափով, իսկ ՀՀ մարզերում և Արցախում՝ թվային հեռարձակում SD ձևաչափով: Հանրային հեռուստաընկերության Միջազգային ալիքի հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, Հյուսիսային Ամերիկան և Հարավային Ամերիկայի հյուսիսային մասը: Շարունակվել են աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում մալուխային կապուղիներով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ: Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի միջոցով շարունակել է իրականացնել համաժամանակյա հոսքահաղորդում՝ հասանելի դարձնելով հաղորդումների առցանց դիտումը ամբողջ աշխարհում: Առավել կայուն առցանց հեռարձակում ունենալու արդյունքում տարեցտարի աճում են կայքով և բջջային հավելվածներով համաժամանակյա դիտումների քանակը և ընդհանուր դիտելիության մակարդակը: Թարմացվել է Հանրային հեռուստաընկերության վեբ կայքը, ավելացել է կայքէջի միջոցով հասանելի և արխիվացված հաղորդումների քանակը:

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունն ամբողջությամբ ուղղված է հոգևոր բարոյական արժեքների քարոզչությանը, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը:

2018-2019 թվականներին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ: Ընդհանուր առմամբ, 2018-

2019 թվականներին ընկերությունը հեռարձակել է 6 570 ժամ հեռուստահաղորդումներ հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ մշակութային, մշակութային լրատվություն, հոգևոր, գիտահանրամատչելի և ուսումնական վավերագրական կինոնկարներ, երաժշտական ծրագրեր և համերգներ, մանկական, ուսումնական և այլ հաղորդումներ:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2018-2019 թվականներին Հայաստանի հանրային ռադիոընկերության կողմից պատրաստվել և հեռարձակվել են ռադիոհաղորդումներ հետևյալ ծավալներով. «Առաջին ծրագիր» ռադիոալիք՝ օրական 24 ժամ, «Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)՝ օրական 24 ժամ, «Հոգևոր-մշակութային» ռադիոալիք՝ օրական 24 ժամ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար օտարալեզու հաղորդումներ: 2020 թվականի հունվար ամսից եթեր է հեռարձակվում մայրաքաղաքային սփուման «Արևիկ» ռադիոալիքը, իսկ 2020 ընթացքում նախատեսվում է հեռարձակել ևս 2 մայրաքաղաքային սփուման ռադիոալիք՝ «Մշակույթ» և «Ժողովրդական ռադիո»:

2018-2019 թվականներին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքները, ինչպես նաև հեռարձակված (2020 թվականին ծրագրված) հաղորդումների թեմատիկ ուղղությունները և ծավալները ներկայացված են **Աղյուսակ 2-ում**:

Աղյուսակ 2. 2018-2020 թվականներին Հանրային ռադիոընկերության ռադիոալիքների, ինչպես նաև հեռարձակված/հեռարձակման ենթակա հաղորդումների փաստացի ծավալները՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հ/Հ	Հաղորդումների թեմատիկ ուղղություններ	Հեռարձակված հաղորդումների ծավալներ (ժամ)		
		2018	2019	2020 ծրագրված
1	«Առաջին ծրագիր» ռադիոալիք, այդ թվում՝	8 760	8 760	8 784
1.1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1 143	1 138	1542
1.2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	2 850	2 661	2513
1.3	Մշակութային	1 074	1 201	1068
1.4	Երիտասարդական	160	91	0
1.5	Մանկապատանեկան	181	68	0
1.6	Կրթական և հայոց լեզու	265	305	288
1.7	Ժամանցային	781	735	78
1.8	Հոգևոր	167	156	105
1.9	Երաժշտական	1 277	1 688	2376
1.10	Սպորտային	52	0	0
1.11	Առողջապահական	291	298	261
1.12	Այլ	519	419	553
2	«Երկրորդ ծրագիր» ռադիոալիք («Իմ ռադիո»)	8 760	8 760	8 784
3	«Հոգևոր-մշակութային» ռադիոալիք	8 760	8 760	8 784
4	Մայրաքաղաքային սփուման «Արևիկ» ռադիոալիք	0	0	8 784
5	Մայրաքաղաքային սփուման «Մշակույթ» ռադիոալիք	0	0	3 672
6	Մայրաքաղաքային սփուման «Ժողովրդական ռադիո» ռադիոալիք	0	0	3 672
7	ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հեռարձակման համար պատրաստվող	1 186	829	821

Հանրային ռադիոընկերությունը, հավատարիմ մնալով որդեգրած եթերային քաղաքականությանը, շարունակում է պատրաստել և հեռարձակել ազգային, պետական և հանրային շահը կարևորող հաղորդումներ: Եթերացանցում ընդգրկված են հաղորդումներ, որոնք նվիրված են տարբեր ոլորտների՝ մշակույթ, գրական կյանք, արվեստագետներ, երիտասարդներ, հաշմանդամների խնդիրներ, ընտանիքների անդամների և սերունդների միջև փոխհարաբերություններ, սոցիալական կյանք, հեռարձակվել են կրթական, դաստիարակչական, հոգևոր, ժամանցային, երաժշտական, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդմանը և ընդլայնմանը միտված հաղորդումներ: 2018-2019 թվականներին հանրության լայն շրջանակների ներգրավվածությամբ պատրաստվել են մի շարք հաղորդումներ, որոնց ուշադրության կենտրոնում են եղել հանրությանը հուզող խնդիրները՝ առողջապահություն, իրազեկվածություն և սեփական շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում, սպառողական իրավունք, էկոլոգիական խնդիրներ, գյուղացիներին հուզող հարցեր: Քաղաքական և տնտեսական իրադարձությունները վերլուծվել և բազմակողմանիորեն քննարկվել են տարբեր հաղորդումների շրջանակներում:

Քաղաքական, տնտեսական և հասարակական հաղորդումները 2018-2019 թվականներին կազմել են Առաջին ծրագրի եթերի համապատասխանաբար 32.5 և 30.4 տոկոսը: 2019 թվականին մեկնարկել է Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի հաղորդումների ցուցադրումը (վիզուալիզացիա) համացանցում և համաժամանակյա հեռարձակումը ֆեյսբուքյան էջում, ինչը մեծացրել է պաշտոնական ֆեյսբուքյան էջի և Ընկերության կայքէջի այցելությունները: Ընդլայնվել է Հանրային ռադիոալիքների սփռման տիրույթը տարածաշրջանում և բարելավվել հեռարձակման որակը սահմանամերձ տարածքներում:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական նպատակները.

- ապահովել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվության ստեղծումն ու տարածումը,
- ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային բովանդակություն,
- տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին,
- լուսաբանել պետական իշխանության մարմինների և հանրային կառույցների գործունեության ուղղությունները, նպատակներն ու արդյունքները,

- ապահովել խոսքի ազատության, բազմակարծության և հասարակական համաձայնության հարթակ, ձևավորելով հանդուրժողականության և քաղաքակիրթ բանավեճի նորմեր, վարքագծի օրինակներ,
- կրթական, ճանաչողական, մշակութային և մանկական հաղորդումների միջոցով նպաստել հասարակության բարոյական և մարդկային հատկանիշների զարգացմանը, աջակցել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը,
- Սփյուռքի մեր հայրենակիցներին ներկայացնել Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքը, ներգրավել և մասնակից դարձնել հայաստանյան և համազգային ձեռնարկներին՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք կապերի վերաիմաստավորմանը, Հայրենիքի զարգացմանը և հայրենադարձությանը:

Վերը նշված ծրագրի նպատակները, վերջնական արդյունքները, չափորոշիչները և թիրախային ցուցանիշները, ինչպես նաև կապը ՀՀ Կառավարության ծրագրի պահանջների հետ ներկայացված է աղյուսակ 3-ում (Հավելված 3-ի Մաս 3):

«Պետական մարմնի ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները»

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Ստեղծել և տարածել շուրջօրյա հեռուստատեսային, ռադիո և տեսալսողական տեղեկատվություն: Ապահովել բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային բովանդակություն: Տրամադրել անաչառ լրատվություն Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին:	1042 - Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում	Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի օրիգինալ հաղորդումների տարեկան ժամաքանակ, չափման միավորը՝ ժամ	3000	2020	3030	2021	Հանրային հեռուստառադիոընկերության էտերի դրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով: Մասնավորապես Հանրային արբանյակային հեռարձակումը աջակցում է Սփյուռքի հետ կապերի զարգացմանը՝ ՀՀ կառավարության ծրագրում նշված խնդիրների լուծմանը: Հեռուստածրագրերի մոտ 40 տոկոսն ունի կրթական, մշակութային, մարզական, գիտակրթական ուղղվածություն:
		Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանությունը ըստ հաղորդաշարերի քանակի, չափման միավորը՝ հաղորդաշար	50	2020	55	2021	
		Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի եթերում օրիգինալ /նոր/ հաղորդումների ապահովում՝ հեռարձակվող հաղորդումների ընդհանուր եթերաժամանակի մեջ, չափման միավորը՝ %	44	2020	45-48	2021	

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2021-2023 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի քաղաքականության հիմք է հանդիսանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին ամրագրված լիազորությունների իրականացումը:

2021-2023 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար	Հիմնավորումներ
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային հեռուստատեսային բովանդակության ապահովում	Միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-34 և 47 հոդվածների պահանջներով: Ծրագրի նպատակները անմիջականորեն կապված են ՀՀ Կառավարության ծրագրի գրեթե բոլոր ուղղությունների հետ՝ լուսաբանման և հանրայնացման իմաստով:
Հանրային հեռուստաընկերության հաղորդումների բազմազանության ապահովում՝ ըստ հաղորդաշարերի քանակի	
Հանրային հեռուստաընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Ինտերնետ հարթակներում առցանց հանրային հեռուստածրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հանրային ռադիոընկերության օրիգինալ հաղորդումների տեսակարար կշռի ավելացում	
Տեղեկատվական, ճանաչողական, մանկական, կրթական, մշակութային և ժամանցային ռադիո բովանդակության ապահովում	
Ինտերնետ հարթակներում առցանց ռադիոծրագրի բարձր դիտելիության ապահովում	
Հոգևոր-մշակութային հաղորդումների հեռարձակման ապահովում	

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	11001	Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ	Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ		«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք
1042	11002	Հեռուստատեսային ծառայություններ	Հեռուստատեսային հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք
1042	11003	Ռադիո ծառայություններ	Ռադիո հաղորդումների պատրաստում և հեռարձակում		«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք
1042	11005	Հոգևոր մշակութային հեռուստատեսային ծառայություններ	Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ		«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1042	12001	Միջազգային կազմակերպություններին անդամակցություն	Միջազգային կազմակերպություններին Հանրային հեռուստառադիոընկերության անդամակցության վճարներ		
1042	31001	Հանրային հեռուստառադիոընկերության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում		
1042	32001	Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով	Հեռուստատեսային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերում		
1042	32002	Ներդրումներ շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով	Շենք-շինությունների հիմնանորոգում		

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվում է 1042 «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» բյուջետային ծրագիրը, որի միջոցառումներն են.

- 11001 «Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում, համակարգում և մոնիտորինգ»
- 11002 «Հեռուստատեսային ծառայություններ», որը իրականացվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11003 «Ռադիո ծառայություններ», որը իրականացվում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 11005 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ», որը իրականացվում է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջոցով,
- 12001 «Միջազգային կազմակերպություններին անդամակցություն»
- 31001 «Հանրային հեռուստառադիոընկերության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում», որը նախատեսվում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար,
- 32001 «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» դրամաշնորհ, որը նախատեսվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինման համար,
- 32002 «Ներդրումներ շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով» դրամաշնորհ, որը նախատեսվում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգման համար:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանման համար 2018-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեից փաստացի ծախսվել է տարեկան համապատասխանաբար 120.3 մլն դրամ և 134.4 մլն դրամ: 2020 թվականին այդ նպատակով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է հատկացնել 146.9 մլն դրամ (ճշգրտված բյուջե՝ 142.8 մլն դրամ), ինչպես նաև Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերելու նպատակով հատկացվել է հավելյալ 1.4 մլն դրամ:

Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը հանդիսանում են Եվրոպական հեռարձակողների միության (EBU) ակտիվ անդամ, ինչի համար Հանրային հեռուստառադիոընկերությունը վճարում է տարեկան անդամակցության վճար: Անդամակցությունը Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին հնարավորություն է ընձեռում Հայաստանը ներկայացնելու Եվրոպական հեռարձակողների միության կողմից կազմակերպվող մի շարք միջազգային միջոցառումների շրջանակներում (օրինակ՝ Եվրատեսիլ, Մանկական եվրատեսիլ և այլն), ինչպես նաև հեռուստառադիոընկերություն հասանելի դարձնելու միջազգային խոշոր սպորտային և այլ միջոցառումները: Եվրոպական հեռարձակողների միության անդամակցության համար 2018-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարից ծախսվել է համապատասխանաբար 42.5 մլն դրամ և 46.2 մլն դրամ, իսկ 2020 թվականին այդ նպատակով «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է հատկացնել 46.0 մլն դրամ (95,247.47 շվեյցարական ֆրանկին համարժեք):

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվող ծրագրի ընդհանուր գումարը (առանց հիմնարկի աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման ծախսերի) «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ճշգրտված բյուջեն կազմել է 7,515.9 մլն դրամ, սակայն 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի համաձայն՝ 2021-2022 թվականներին նույն նպատակների իրականացման համար նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 6,838.8 մլն դրամ և 7,038.8 մլն դրամ, մինչդեռ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից իրականացվող միջոցառումների գոյություն ունեցող պարտավորությունների գծով ընդհանուր ծախսը 2021-2022 թվականներին կկազմի համապատասխանաբար 7,021.1 մլն դրամ և 9,018,0 մլն դրամ, իսկ 2023 թվականին այդ նպատակով հարկավոր կլինի 9,273.9 մլն դրամ (ծրագրերի գծով միջնաժամկետ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը ներկայացվել են հավելված 5-ում և 10-ում):

ՀՀ 2021-2023 թվականների ՄԺԾԾ հաստատված չափաքանակներով Հանրային հեռուստաընկերության շենք-շինության հիմնանորոգման միջոցառման իրականացման համար 2021 թվականի համար գումար չէր նախատեսվել, իսկ 2022 թվականի համար նախատեսվել էր 200.0 մլն դրամ, իսկ տեխնիկական վերազինման համար 2021-2022 թվականների համար նախատեսվել էր տարեկան 100 մլն դրամ: Ցանկանում ենք տեղեկացնել, որ սահմանված

գումարների հատկացման դեպքում հնարավոր չի լինի իրականացնել Հանրային հեռուստաընկերության կողմից նախատեսված տեխնիկական վերազինման, շենք-շինությունների և տաղավարների նորոգման աշխատանքները, ինչի հետևանքով հնարավոր չի լինի իրականացնել հեռուստահաղորդումների անհրաժեշտ ծավալի արտադրության կազմակերպման գործընթացը: Տեղեկացնենք, որ թեև անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցման գործընթացը Հանրային հեռուստաընկերությունում մեկնարկել է 2013 թվականից, սակայն այդ գործընթացը կրում է շարունակական բնույթ և այս ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերությունը, ըստ հաջորդականության և առաջնահերթությունների, իրականացրել է ընկերության տաղավարային և շարժական տեխնիկայի մասնակի վերազինում և մինչև 2025 թվականը նախատեսվում է համալրել ընկերության ԱՍԲ-1, ԱՍԲ-7, ԱՍԲ-2 և ԱՍԲ-4 նկարահանման տաղավարների տեխնիկական պարկը, քանի որ վերջիններս առ այսօր հագեցած են անալոգային SD տեխնիկական միջոցներով, որոնք կիրարկելի չեն ներկայիս HD տեխնիկական պարամետրերին:

Ավելին, Ընկերության տաղավարային բոլոր նկարահանումները իրականացվում են շարժական հեռուստակայանի թվային տեխնիկայի միջոցով, ինչը արդյունավետ չէ տեխնիկայի շահագործման երկարակետության տեսանկյունից, քանի որ շարժական հեռուստակայանը միակն է ամբողջ հանրապետությունում, որն իր որակով և թվային տեխնիկական հագեցվածությամբ ծառայում է ինչպես Հանրային հեռուստաընկերության բոլոր տաղավարներում իրականացվող նկարահանումների ամբողջ ծավալով ապահովման, այնպես էլ արտատաղավարային կարևոր պետական, մշակութային և նշանակալի միջոցառումների նկարահանումների կազմակերպման համար: Հարկ է հաշվի առնել, որ Հանրային հեռուստաընկերությունը շարժական հեռուստակայանը (ՇՀԿ) ձեռք է բերել 2015 թվականին և արդեն 5 տարիների ընթացքում ունի որոշակի ֆիզիկական մաշվածություն, անընդհատ կարիք ունի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման, իսկ Հանրային հեռուստաընկերության կողմից 2021-2023 թվականներին նախատեսված տեխնիկական վերազինման չիրականացման պայմաններում առկա է ՇՀԿ-ի հնարավոր խափանման հավանական ռիսկ, ինչը կարող է հանգեցնել հեռուստաարտադրության ընդհանուր պարալիզացման:

Ներկայիս հեռուստահաղորդումների արտադրության ծավալները մոտ 3 անգամ բարձր են 2013-2016 թվականներին իրականացված նկարահանման ծավալներից և այն պահանջները, որոնք ներկայացվում են Հանրային հեռուստաընկերությանը, որպես հանրային հեռարձակողի, հնարավոր չէ իրականացնել առանց նորոգված և տեխնիկապես վերազինված տաղավարների: Ավելին, եթե

2020 թվականից սկսած չվերանորոգվի ԱՍԲ-7 խմբագրատուն մասնաշենքը և այնտեղ տեղակայված տաղավարը և կից ենթակառուցվածքները, ապա առնվազն 3 տարի հետո այն կհայտնվի առավել վթարային վիճակում, ինչը թույլ չի տա այն ընդհանրապես շահագործել և այնտեղ իրականացնել նկարահանման աշխատանքներ՝ հաշվի առնելով, որ այդ մասնաշենքում է գտնվում Հանրային հեռուստաընկերության նկարահանման ամենամեծ տաղավարներից մեկը, որը ներկայումս չունի օդափոխման, ջեռուցման և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է մինչև 2025 թվականը ավարտել ընկերության բոլոր շենք-շինությունների նորոգման աշխատանքները, սակայն տեխնիկական վերագինման պարագայում հիմնական տեխնիկական պարկի վերագինումից հետո տարիների ընթացքում տեխնիկական միջոցների մաշվածքի և ժամանակակից տեխնոլոգիական պահանջների սրընթաց փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն կառաջանա ժամանակ առ ժամանակ թարմացնել ընկերության տեխնիկական պարկը:

Այսպիսով 2021-2023 թվականներին միջնաժամկետ ծախսային ծրագրի «Ներդրումներ շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով» միջոցառման շրջանակներում Հանրային հեռուստաընկերությունը 2022-2023թթ. նախատեսում է իրականացնել Հանրային հեռուստաընկերության գլխավոր մասնաշենքի ԱՍԲ-1 նկարահանման տաղավարի և կից ինժեներատեխնիկական նշանակության աշխատասենյակների ու տարածքների (մոտ 840 քառ. մետր մակերես) հիմնանորոգման, խմբագրատուն (ԱՍԲ-7 տաղավարասարքասրահային համալիր) մասնաշենքի ու դրան հարակից տարածքների (մոտ 6 290 քառ. մետր մակերես) հիմնանորոգման, ինչպես նաև Երևան ստուդիա մասնաշենքի վերակառուցման, վերահատակագծման և կից տաղավարասարքասրահային համալիրի (հեռուստատեսային ստուդիա) կառուցման (մոտ 1 640 քառ. մետր մակերես) աշխատանքներ՝ համապատասխանաբար ըստ տարիների 766.5 մլն դրամ և 821.7 մլն դրամի չափով: Նախատեսված աշխատանքների մանրամասներն են՝

- Գլխավոր մասնաշենքի ԱՍԲ-1 տաղավարը հարակից ենթակառուցվածքների (սարքասրահ, եթերային, ձայնային ապահովման սրահներ և այլն) հետ միասին խորհրդային ժամանակաշրջանից ի վեր համալիր կարգով չեն հիմնանորոգվել: Որոշակի աշխատանքներ են իրականացվել միայն մասնաշենքում՝ աշխատակիցների և նկարահանումների մասնակիցների աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, վերանորոգվել են սանհանգույցները,

դիմահարդարման սենյակը, հանդերձարանները, սպասասրահը և ջեռուցման համակարգը, սակայն ԱՄԲ-1 տաղավարի և հարակից ենթակառուցվածքների զբաղեցրած որոշ տարածքները մնացել են անբարեկարգ, ինչը թույլ չի տալիս արդյունավետ օգտագործել ամբողջական տարածքը: Արդի տեխնիկական միջոցների ներդրման նպատակով անհրաժեշտ է նաև ամբողջ տաղավարասարքասրահային համալիրում ներդնել (օգտագործելով նաև առկա համակարգերը) արդի պահանջներին համապատասխանող էներգամատակարարման, օդափոխության, հովացման, ջեռուցման, կապի, հրդեհային անվտանգության, լուսաձայնային ապահովման, հեռարձակման և այլ համակարգեր: Այս աշխատանքների իրականացման ընդհանուր արժեքը կկազմի 171.9 մլն դրամ:

- Խմբագրատուն մասնաշենքը և վերջինիս ԱՄԲ-7 նկարահանման տաղավարը իրենց շահագործման ամբողջ ժամանակահատվածում (մոտ 30 տարի) չեն հիմնանորոգվել և չեն համալրվել համապատասխան տեխնիկական միջոցներով: Ավելին, դեռևս 2011 թվականին «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲ ընկերության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում ներկայացված եզրակացությամբ մասնաշենքի տեխնիկական վիճակն, ընդհանուր առմամբ, գնահատվում է բավարար, իսկ վնասվածության մակարդակը դասվում է 2-րդ աստիճանի: Կառույցի առանձին հատվածների (քարե սանդուղքներ, օդափոխման տեղամաս և այլն) տեխնիկական վիճակը անբավարար է, տեղ-տեղ նաև վթարավտանգ, իսկ վնասվածության մակարդակը՝ 3-րդ աստիճանի: Ակնհայտ է, որ մասնաշենքի տեխնիկական վիճակն առ այսօր ավելի է վատթարացել և դրա համալիր վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքները նշված ժամկետներում չիրականացնելու պարագայում վերջինիս նպատակային օգտագործումը (որն առանց այդ էլ խիստ սահմանափակ է) անհնար կդառնա: Արդյունքում, անբավարար վիճակում է գտնվում մասնաշենքը, այդ թվում աշխատասենյակները, կոմունիկացիոն համակարգերը, տանիքը, հարակից տարածքները, ինչպես նաև տաղավարը և դրա հարակից ենթակառուցվածքները: Մասնաշենքը պետք է համապատասխանեցվի նորմատիվներով սահմանվող տեխնիկական (ձայնամեկուսացում, աղմկաընկալում, վիբրոմեկուսացում և այլն) ցուցանիշներին: Վերակառուցվող և կառուցվող տարածքներն ըստ օգտագործման նշանակության պետք է ապահովվեն բոլոր անհրաժեշտ կոմունիկացիոն համալիր համակարգերով (ջրամատակարարում, ջեռուցում, էլեկտրամատակարարում, օդափոխություն, ջերմամատակարարում, սառնամատակարարում, հատուկ լուսավորություն, այլընտրանքային էներգոմատակարարում, կապ, անվտանգություն, հրդեհային անվտանգություն և այլն): Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել նաև մասնաշենքի

հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ: Այս աշխատանքների իրականացման ընդհանուր արժեքը կկազմի 1,158.1 մլն դրամ:

- Հեռուստատեսության ժամանակակից զարգացումը ենթադրում է առցանց լրատվության ստեղծումն ու վերջինիս համադրումը մետրային ալիքի հետ, որը հնարավորություն կտա հավասար պայմաններում մրցակցել կոմերցիոն հեռուստաալիքների հետ: Այդ ուղղությամբ Հանրային հեռուստաընկերությունը դեռևս 2019 թվականին նախաձեռնել է լրատվական ծառայության առցանց տիրույթի ստեղծումն ու առաջխաղացումը: Նշյալ փոփոխությունները միտված են Հանրային հեռուստաընկերության համար նոր ճանապարհներ ստեղծելուն ու տեղեկատվությունը հանրության համար առավել հասանելի դարձնելուն: Այդ ուղղությամբ անհրաժեշտ են թե՛ տեխնիկական, թե՛ տաղավարային նոր պայմաններ: Նախատեսվում է իրականացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության լրատվական ծառայության «Երևան Ստուդիա» մասնաշենքի վերակառուցման, վերահատակագծման և կից տաղավարասարքասրահային համալիրի /հեռուստատեսության ստուդիայի/ կառուցման աշխատանքներ՝ ընդհանուր առմամբ մոտ 1640 քառ. մետր մակերեսով, ընդ որում «Երևան Ստուդիա» մասնաշենքի վերակառուցվող, վերահատակագծվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 800 քառ. մետր, իսկ լրատվական ծառայության նոր տաղավարի, ինժեներատեխնիկական աշխատասենյակների /եթերային, սերվերային և թարգմանչական/ և գրասենյակային տարածքի մակերեսը կազմում է մոտ 840 քառ. մետր: Նախատեսվում է կառուցվող նոր տաղավարում իրականացնել լրատվական ծառայության թողարկումների և լրատվական բնույթի այլ հաղորդումների նկարահանումները, իսկ լրատվական ծառայության ներկայիս տաղավարը տրամադրել առցանց ալիքին, որն արդեն իսկ հագեցած է տեխնիկական սարքավորումներով: Նոր տաղավարը նախատեսում է համալրել թվային ժամանակակից սարքավորումներով, ինչը հնարավորություն կտա թե՛ մետրային, թե՛ առցանց ալիքներին իրականացնել միաժամանակյա գործունեություն: Այդ նպատակով նոր մասնաշենքի կառուցման գծով նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ու շինարարական աշխատանքների իրականացման, տաղավարասարքասրահային համալիրի տեխնիկական վերազինման, նոր տաղավարային դեկորացիայի ու արտադրական գույքի ձեռքբերման ուղղությամբ նախահաշվային գումարը կազմում է 348.9 մլն դրամ, որից շինարարության մասնաբաժինը կազմում է 258.1 մլն դրամ:

2021-2023 թվականներին «Ներդրումներ տեխնիկական վերազինման նպատակով» միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հանրային հեռուստաընկերության ԱՄԲ-7 նկարահանման տաղավարի մասնակի տեխնիկական վերազինման նպատակով տեսաձայնային, լուսային և ձայնային տեխնիկայի ձեռքբերում, ԱՄԲ-1 նկարահանման տաղավարի և կից ինժեներատեխնիկական տարածքների տեխնիկական վերազինման նպատակով տեսաձայնային, լուսային և ձայնային տեխնիկայի ձեռքբերում, ինչպես նաև լրատվական ծառայության նոր մասնաշենքի տեխնիկական վերազինման նպատակով հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերում: Այդ ուղղությամբ աշխատանքների պատշաճ իրականացման համար Հանրային հեռուստաընկերությունը 2021-2023 թվականներին նախատեսում է տարեկան համապատասխանաբար 500.0 մլն դրամ, 457.8 մլն դրամ և 771.6 մլն դրամ, որից բյուջեից նախատեսվում է ֆինանսավորում 2022-2023թթ համար համապատասխանաբար՝ 425.8 մլն դրամի և 626.5 մլն դրամի չափով: Հարկ է նշել, որ 2021 թվականի ԱՄԲ-1 տեխնիկական վերազինման գծով նախատեսված գումարի մի մասը՝ 500.0 մլն ՀՀ դրամ, Ընկերությունը նախատեսում է իրականացնել գովազդային եկամուտների հաշվին և ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսում է դիմել ՀՀ կառավարություն՝ ներդրումային ծրագրի շրջանակներում տեխնիկական վերազինման ուղղությամբ ձեռքբերման ենթակա հեռուստատեսային տեխնիկայի ներմուծման գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը երեք տարի հեռաձգելու նպատակով՝ 2021թ. ֆինանսական միջոցների անբավարարության պայմաններում: Մասնավորապես.

- ԱՄԲ-7 նկարահանման տաղավարը տարիներ շարունակ չի հագեցվել ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխան: Ներկայումս այն իր տեխնիկական հագեցվածությամբ, մասնավորապես SD տեխնիկական պարամետրերով առկա տեխնիկական սարքավորումներով, չի համապատասխանում թվային տեխնիկայի ժամանակակից պահանջներին և արդյունքում հնարավոր չէ իրականացնել նկարահանումներ ու ստանալ որակյալ հեռուստատեսային արտադրանք: Ներկայումս այստեղ, ինչպես և ԱՄԲ-1-ի դեպքում, բոլոր տիպի նկարահանումներն իրականացվում են Ընկերությանը պատկանող միակ թվային շարժական հեռուստակայանի (ՇՀԿ) միջոցով, որն էլ դիսկային է այն առումով, որ տվյալ ՇՀԿ-ի ծանրաբեռնված շահագործումը ստուդիական և արտաստուդիական նկարահանումների գործընթացում կտրուկ ավելացնում է նրա խափանման հնարավորությունը: Հույժ կարևոր է վերջինիս տեխնիկական վերազինումը ժամանակակից թվային տեսաձայնային, լուսային և ձայնային տեխնիկայով:

- ԱՄԲ-1 նկարահանման տաղավարում տարիներ շարունակ բոլոր տիպի նկարահանումները իրականացվում են Ընկերությանը պատկանող միակ ՇՀԿ-ի միջոցով, քանի որ տաղավարն առ այսօր հագեցված չէ ժամանակակից թվային հեռուստատեսային տեխնիկայով: Այստեղ նույնպես առկա է ռիսկ ՇՀԿ-ի հնարավոր խափանման արդյունքում նկարահանումների համընդհանուր պարալիզացման: Չափերով ամենամեծ ԱՄԲ-1 նկարահանման տաղավարում իրականացվում են Ընկերության տաղավարային նկարահանումների մեծ մասը ու այս առումով հրատապ անհրաժեշտություն է առաջանում վերջինիս թվային տեխնիկական միջոցներով վերազինման գործընթացի կազմակերպման ուղղությամբ:

- Լրատվական ծառայության նախատեսվող նոր մասնաշենքի կառուցմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև լրատվական ծառայության նոր մասնաշենքի ու տաղավարի տեխնիկական վերազինում՝ հաշվի առնելով լրատվական ծառայության պատշաճ կազմակերպման կարևորությունը և ժամանակակից թվային տեխնիկայով, դեկորացիաներով ու տնտեսական գույքով հագեցած արտադրական համալիր ստեղծելու անհրաժեշտությունը:

